«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Արցախի իշխանությունը Բագրատունյաց թագավորության շրջանում» թեմայի դասավանդումը 10-րդ դասարանում՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ
ԱՌԱՐԿԱ	«Հայոց պատմություն»
ՀԵՂԻՆԱԿ	Անահիտ Բաղդասարյան
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Ծաղկալանջի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …… 3

Գլուխ 1.

Արցախի իշխանությունը Բագրատունյաց թագավորության շրջանում…….. 5

Գլուխ 2.

«Արցախի իշխանությունը Բագրատունյաց թագավորության շրջանում» թեմայի դասավանդումը 10-րդ դասարանում՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ……...……. 16

Եզրակացություն……..……. 20

Օգտագործված գրականության ցանկ ……..……..……22

Հավելված

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը՝ Արցախի իշխանության IX-XI դարերի պատմությունն առ այսօր շարունակում է մնալ ուսումնասիրողների և հիմնահարցով զբաղվողների ուշադրության կենտրոնում: Հատկապես կարևոր է ուսումնասիրել Արցախի իշխանության պատմությունը Բագրատունյաց թագավորության շրջանում (885-1045 թթ.), քանի որ այն պատմագիտության արդի խնդիրներից է և կոչված է օգնելու նրա շուրջ ծագած ներկայիս հարցերի ճիշտ ըմբռնմանն ու լուսաբանմանը: Հարկ է նշել, որ ուսումնասիրելուց բացի շատ կարևոր է նաև սույն թեմայի դասավանդումը, որը մեծ դեր կունենա 10-րդ դասարանի սովորողների արժեքային համակարգում:

Պետք է նշել, որ Արցախը բնաաշխարհագրական, վարչաքաղաքական, տնտեսական և ազգագրական տեսակետներով մի ամբողջական տարածություն է կազմում, որտեղ արցախահայությունը հազարամյակներ շարունակ, դիմակայելով չարին, մաքառելով անագորյուն թշնամիների դեմ, գրեթե անընդմեջ պահպանել է իր ազգային պետականությունն ու ինքնությունը՝ ստեղծելով համամարդկային արժեքներ, փորձելով անխաթար պահել Հայոց Արևելից դարպասները:

Հետազոտության նպատակն է՝ 10-րդ դասարանի սովորողներին իրազեկել, որ դեռևս միջնադարում՝ Բագրատունյաց թագավորության շրջանում՝ գոյություն ուներ Արցախի իշխանությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

- ✓ ներկայացնել Արցախի իշխանության պատմությունը Բագրատունյաց թագավորության շրջանում:
- ✓ մշակել «Արցախի իշխանությունը Բագրատունյաց թագավորության շրջանում» թեման դասավանդելու ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներ. 10-րդ դասարանում՝ Հայոց պատմության դասաժամի ընթացքում:

Մեր քննարկած ժամանակաշրջանի հիմնախնդրի պատմության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրային նշանակություն ունի Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» երկը[1]:

Հիմնախնդրի գիտական հետազոտությամբ և վերլուծությամբ են զբաղվել հայտնի պատմաբաններ Բ. Ուլուբաբյանը[2], Վ. Բալայանը[3] և ուրիշներ:

Բացի վերոհիշյալներից, քննարկվող հարցի շուրջը հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ, որոնք մեծապես օգնում են նրա գիտական վերլուծությունների հիման վրա ու առավել հանգամանալից շարադրմանը[4]:

Հարկ է նշել, որ ուսումնասիրվող հիմնախնդրին առնչվող բոլոր գիտական ուսումնասիրությունները, հրապարակումները որպես ուղենիշ են հանդիսացել սույն աշխատանքի մի շարք հիմնահարցերի ճշգրիտ ու հիմնավոր պարզաբանման համար:

Սույն աշխատանքն ունի տեսական կարևոր նշանակություն հիմնախնդրի շուրջ հետազոտություն իրականացնողների համար: Եվ գործնական նշանակություն՝ Հայոց պատմության դասաժամերի ընթացքում:

Կառուցվածքային տեսակետից հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

«ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ

[1] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969:

[2] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994:

[3] Բալայան Վ., Արցախի պատմություն (Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը), Երևան, 2002:

[4] Բարխուդարյան Ս., Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, «Պատմա – բանասիրական հանդես», 1971, №1:

Յուզբաշյան Կ., «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը միջազգային իրավունքի տեսանկյունից, «Պատմա - բանասիրական հանդես», 1975, №1:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

ԳԼՈՒԽ 1.

«ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ»

Արաբական խալիֆայության ենթակա երկրներում, այդ թվում և Հայաստանում, ավելի ու ավելի էր զորեղանում արաբական լուծը թոթափելու ձգտումը: Երկրի անկախության վերականգման համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ:

Հարկ է նշել, որ IX դարում Արաբական խալիֆայությունը սկսեց թուլանալ և դեպի անկում ընթանալ: Խալիֆայությունը զուրկ էր տնտեսական միասնական հիմքից, նրան ենթակա երկրները գտնվում էին զարգացման տարբեր մակարդակի վրա և իրար հետ տնտեսական սերտ կապեր չունեին: Տարբեր լեզու, դավանանք և տարբեր շահեր ունեցող ժողովուրդների բռնի միավորումը մի ընդարձակածավալ պետության մեջ, կայուն և շատ երկարատև լինել չէր կարող: Ակնհայտ էր դառնում խալիֆայության նաև ռազմական թուլացումը: Խալիֆայության ներքին հասարակական-տնեսական, քաղաքական ներհակությունները գնալով ավելի ու ավելի խորանում էին:

Ավատատիրական հարաբերությունների զարգացումը Արաբական խալիֆայության երկրներում, հատկապես ժառանգական հողատիրության աստիճանական ամրապնդումը և ընդարձակումը, հիմք դարձան կենտրոնախույս ուժերի զորեղացման և, ընդհակառակը, պատճառ՝ խալիֆայության կենտրոնական իշխանության թուլացման: Դրանով տնտեսական և քաղաքական նախադրյալներ էին ստեղծվել տեղական անկախ իշխանությունների գոյացման համար:

Անկախության համար պայքար էին մղում Արաբական խալիֆայության լծի տակ ընկած գրեթե բոլոր ժողովուրդները, այդ թվում՝ հայերը:

Հայկական իշխանությունների դիրքերի ուժեղացմանը հետևեց հարկերի վճարման անկանոնությունը և քանակի նվազեցումը: Հայոց իշխանների ժառանգական հողատիրության վերականգնումը մի կողմից և հարկերի նվազումը մյուս կողմից նպաստեցին երկրում սկսվող տնտեսական վերելքին և ամրապնդեցին անկախության համար մղվող պայքարի նյութական հնարավորությունները: Արաբական տիրապետությունից ազատագրվելու պայքարը Հայաստանում թևակոխել էր իր վերջին՝ վճռական փուլը և դրսևորվում էր ժողովրդական հուժկու ապստամբությունների ձևով:

Յուսուֆի անփառունակ վախճանից հետո Հայաստանում, ինչպես նաև Վրաստանում և Աղվանքում, ապստամբությունները նոր թափ ստացան:

Ըստ էության արաբների համար անհաջողությամբ վերջացան նաև Բուղայի արշավանքը և չորս տարի տևած պատերազմները:

Հայտնի է, որ երբ Բուղան շարժվել է նաև դեպի Հյուսիս-արևելյան Հայաստան՝ նպատակ ունենալով դաժան հաշվեհարդար տեսնել Արցախի և Ուտիքի տերերի հետ, որոնք նախընթացին քանիցս կոտորել էին օտար հարկահաններին և ոչնչացրել էին նրանց պատժիչ ջոկատները: Հայոց հակաարաբական պայքարում հայ և օտար աղբյուրների բացառիկ ուշադրությանն են արժանացել երկու անուններ՝ Սահլ Սմբատյանն ու Եսայի Աբու-Մուսեն:

Սահլ Սմբատյանն Արցախի տերն էր IX դարի առաջին կեսում: Նրա տիրույթներն ընդգրկում էին Արցախական աշխարհի արևմտյան և հյուսիսային մասը՝ Սևանի արևելյան ափից մինչև Մուխանք դաշտը[1]: Իսկ Եսայի Առանշահիկը նույն ժամանակ տիրում էր Արցախական աշխարհի հարավային գավառներին և իշխանանիստ էր դարձել Գտիչ (Քթիշ) ամրոցը[2]:

Այս երկու քաջ ու շրջահայաց իշխանների օրոք Արցախի լեռնաստանին տիրելու արաբական ամեն մի փորձ պատժվում էր արժանավորապես, և եկվոր բռնակալները շպրտվում էին Հյուսիս – արևելյան Հայաստանի սահմաններց հեռու:

Աղբյուրները հանգամանորեն պատմում են, թե ինչպես Սահլն իր փոքրաթիվ զորախմբով արաբներին ջարդեց Շիկաքար բերդում՝ այժմյան Շուշի քաղաքի տեղում:

---

[1] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994, էջ 43:

[2] Նույն տեղում:

բռնավորները, որ եկել էին Պարտավ մայրաքաղաքից, ասպատակեցին Ամարասը, շարունակեցին իրենց արյունոտ երթը դեպի արևմուտք և հազար հոգի գերելով՝ ամրացան Շիկաքար բերդում: Ժամանակագիրը վկայում է. «Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահլի Սմբատյան Եռանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրներն իրենց զորքերով լուսադեմին վրա տվին, նրանց բոլորին միասին դիաթավալ արին, ցիրուցան դարձրին և, ինչպես առյուծի ժանիքներից, գերիներին խլեցին»[1]:

Հայ ժողովրդի հակաարաբական պայքարի պատմության ամենագեղեցիկ էջը կապված է Արցախական աշխարհի հարավային գավառների տեր Եսայի Աբու Մուսեի անվան հետ:

Խաղաղասեր իշխան էր Աբու Մուսեն: Սակայն իրեն պարտադրված պատերազմներից միշտ էլ դուրս է եկել հաղթանակով, - Գտիչի (Քթիշի) տիրոջն այդպես է բնութագրում Աղվանքի պատմիչը:

Աբու Մուսեին խրախուսողը, իհարկե ծանարների երկրում Բուղայի կրած ծանր պարտությունն էր: Եվ սկսում են եռանդուն պատրաստություններ տեսնել: Իր զորքերը, ինչպես և ժողովուրդը նա հավաքում է Քթիշ անունով բերդի մեջ:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ բերդ – ամրոցը գտնվում է Գտչավանքի թիկունքին՝ Տողասարի գագաթին: Հայաստանի միջնադարյան պատմության մեջ բազմիցս հիշատակվող Գտիչ – Քթիշ բերդը Դիզակի և ընդհանրապես Արցախի հնագույն և անառիկ ամրոցներից մեկն է, որ գոյություն է ունեցել վաղ միջնադարում[2]:

Իզուր չէ, որ Դիզակի տերերը Տումի գյուղը դարձնելով իրենց վարչական կենտրոնը, ռազմական հենակետ են ընտրել Գտիչ ամրոցը:

Եսայի Աբու Մուսեյի գլխավորությամբ վերոհիշյալ բերդի շուրջը բոլորվեցին պատերազմներ, որոնց մեջ արաբները չունեցան ոչ մի հաջողություն::

Պատմությունն ունի իր անդիմադրելի տրամաբանությունը. հավերժական բռնակալություն չկա: Նվաճումների ու անսանձ կեղեքումների վրա հիմնված ամեն մի տիրակալություն վաղ թե ուշ կործանվում է, քանի որ, առաջին հերթին, այն ինքն է ստեղծում ու սնում իր իսկ բունը կրծող զեռունները: Իններորդ դարի կեսից սկսած

---

[1] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 255:

[2] Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարագիտական հուշարձանները, Երևան, 1985, էջ 90:

արաբական աշխարհակալությունը երերում էր կուսակալների ու ամիրաների խառնակիչ մրցակցությունից: Իսկ Արմինիա կուսակալության մեջ ո՛չ Բուղայի նենգոտ չարությունները, ո՛չ էլ մյուս գործակալների օրհասական միջոցառումները խալիֆայությանը չփրկեցին անփառունակ ելքից:

Փաստորեն 850-852 թվականների ժողովրդական ապստամբությունը և դրան հետևած քառամյա պատերազմները, որոնք ուղեկցվում էին փոփոխակի հաջողություններով, ոչ միայն չամրապնդեցին արաբական տիրապետությունը Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում, այլև երևան բերեցին խալիֆայության կատարյալ անկարողությունը:

Բուղայի քառամյա կռիվները, փաստորեն, խալիֆայության վերջին, ամենախոշոր, բայց ապարդյուն ճիգերն էին՝ զսպելու հայերի և նրա հարևանների անհնազանդությունը:

Բուղայի հեռանալուց (855թ.) հետո Հայաստանը շուտով ամոքեց իր վերքերը և հաջողությամբ շարունակեց պայքարն անկախության համար:

Արաբական խալիֆայության դեմ մղված բազմադարյան պայքարը հայոց պատմության մեջ կազմում է մի առանձնահատուկ դրվագ, որը հրաշալի նյութ է տվել նաև մեր ազգի գեղարվեստական մտածողությանը, մանավանդ բանահյուսությանը: Սա մի պատմաշրջան է, որն ըստ ամենայնի ստուգել է Հայաստան աշխարհի և նրա ժողովրդի կենսունակությունը: Բագրատունիներն արդեն ներկայացնում էին տնտեսական, ռազմական և քաղաքական մի ուժ, ընդունակ գլխավորելու հայկական պետականության վերականգնման համար մղվող պայքարը և իրենց շուրջ համախմբելու մյուս իշխաններին:

Ուստի այս պայմաններում է, որ ապստամբության պաշտոնը 855թ. անցնում է Սմբատի որդի Աշոտ Բագրատունուն, որը խաղաղ և շատ նպաստավոր

պայմաններում շարունակում է վարել երկրի վարչական և զինվորական իշխանությունն իր ձեռքը կենտրոնացնելու քաղաքականություն:

Բագրատունիների տիրույթներն այնքան էին ընդարձակվել, որ բռնում էին Հայաստանի մի խոշոր մասը՝ իրենց սահմաններում ունենալով Շիրակը, Վանանդը, Տաշիրը, Կոգովիտը, Բագրևանդը, Տարոնը, Սասունը, Վասպուրականի մի մասը և

Մոկաց աշխարհը[1]: Նրանց ազդեցությունը տարածվում էր նաև Այրարատի կենտրոնական ու հյուսիսային գավառների և այլ վայրերի վրա: Աշոտ սպարապետի հեղինակությունը ճանաչված էր Վասպուրականի, Սյունիքի, ինչպես նաև Հայաստանի Արևելյան կողմանց և Վրաստանի շատ իշխանների կողմից:

Հայկական պետականության վերականգնման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել նաև տնտեսական առումով: Երկրի բնակչությունը, օգտվելով 855թ. հետևած երեք տասնամյակ տիրող խաղաղությունից, շենացնում իր երկիրը, մշակում դաշտերն ու այգիները, հոտերով ու նախիրներով ծածկում լեռներն ու արոտները, զարգացնում արհեստներն ու առևտուրը. վերակենդանանում էին նաև հին քաղաքները, կառուցվում նորերը:

Արաբական խալիֆայության կազմալուծումն անդառնալիորեն խորանում էր: Կենտրոնական կառավարությունը գրեթե կորցրել էր իր իշխանությունն անկախության ձգտող ծայրամասերի վրա: Հայկական պետականության վերականգնման համար ստեղծված նպաստավոր պայմաններում քաղաքական ասպարեզում գործում էր Աշոտ Բագրատունին, մի նշանավոր ռազմական և քաղաքական գործիչ և նույնքան շնորհալի դիվանագետ: Վերջինս շտապեց օգտագործել այս բարենպաստ իրադրությունը: 859թ. Հայաստանի ոստիկան նշանակվեց Ալի Իբն Յահիա անունով մեկը: Հայ իշխանների պնդումով նա միջնորդեց խալիֆայի առաջ, որը Աշոտ Բագրատունուն ճանաչեց Հայաստանի իշխանաց իշխան: Իշխանաց-իշխանը թագավորից հետո երկրորդ բարձրաստիճան պաշտոնյան իր արքունիքում և կարգավորում իր Արմինիայի խոշոր ավատատերերի հարաբերություններն արաբական իշխանությունների հետ[2]: 862 թ. Աշոտին հանձնվեց նաև ամբողջ երկրի հարկահանություն, որով վճռականորեն փոխվեց արաբական հարկահանության բռնություններով, կամայականություններով և կողոպուտներով ուղեկցվող կարգը: Նվազեց նաև երկրից գանձվող հարկերի քանակը:

Աշոտը, ստանձնելով երկրի փաստական կառավարումը, իր եղբորը՝ Աբասին, որը քաջ զորավար էր նշանակեց սպարապետ: Շուտով Բագրատունիների բանակն

---

[1] Նույն տեղում:

[2] Յուզբաշյան Կ., «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը միջազգային իրավունքի տեսանկյունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, №1, էջ 35:

աճեց և զինվորների թիվը հասավ քառասուն հազար: Այսպիսով, թեև տակավին արաբական տիրապետության և ոստիկանի վերահսկողության ներքո, Բագրատունիների ձեռքում կենտրոնացավ երկրի ինչպես վարչական և ռազմական, նույնպես և տնտեսական իշխանությունը:

Հայկական պետականության վերականգնման համար նպաստավոր էր նաև դարավոր ախոյաններ՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության մրցակցությունը:

IX դարի կեսերին այդ երկու հզոր տերությունների ուժերը գրեթե հավասարակշռվել էին, ուստի հայկական ռազմական ուժերի օժանդակությունը մեկ կամ մյուս կողմին կարող էր խոշոր նշանակություն ունենալ: Խալիֆայությանը մնում էր, ինչ գնով էլ լինի, պահպանել իր տիրապետությունը Հայաստանում և կանխել նրա բյուզանդական կողմնորոշումը, իսկ կայսրությունը ձգտում էր իրեն ենթարկել Հայաստանը կամ դարձնել նրան իր կրտսեր դաշնակիցը: Հայաստանը պիտի ջանար օգուտ քաղել ախոյան երկու պետությունների նման օրինակ փոխհարաբերություններից և դիրքից:

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին հմտորեն օգտագործեց արաբա-բյուզանդական հակամարտությունները՝ Հայաստանի ներքին ինքնուրույնությունն ամրապնդելու և երկիրն օտար ուժերի ներխուժումներից զերծ պահելու համար:

Համաձայն հայկական աղբյուրների, հայ իշխանները տեսնելով Աշոտ Բագրատունու մեծացումն ու հզորացումը, որոշում են նրան դարձնել թագավոր:

Ստեղծված պայմաններում խալիֆային մնում էր մի ելք՝ ճանաչել Աշոտին հայոց թագավոր՝ պահպանելով թեկուզ իր անվանական գերիշխանությունը Հայաստանում: 885 թվականի օգոստոսի 26-ին Արշարունիք գավառի Բագարան բերդաքաղաքում հավաքվում են երկրի իշխանները, Գևորգ Բ Գառնեցի (877-897) կաթողիկոսը և հանդիսավոր կերպով թագադրում Աշոտին: Վերջինիս շտապեց Հայաստանի թագավոր ճանաչել նաև դաշնակից Բյուզանդիան:

Այսպիսով, Արշակունյաց թագավորության անկումից (428թ.) մոտ չորս ու կես դար անց վերականգնվում է հայկական պետականությունը: Այն հայ ժողովրդի պատմության մեջ հսկայական նշանակություն ունեցող և դարակազմիկ երևույթ էր:

Պետք է նշել, որ երբ 885թ. Արաբական խալիֆայությունը Աշոտ Ա Բագրատունուն (885-890թթ.) ճանաչեց Մեծ Հայքի նահանգների գերագահ տիրակալ, Արցախամուր աշխարհը նորից հայտնվեց համահայկական պետության ուղեծրում:

Հայտնի է, որ Արցախը Մեծ Հայքի տասերորդ նահանգն է և ունի 12 գավառ: Արցախը տարածվում է Սյունիքից արևելք՝ Կուր և Արաքս գետերի միջև:

Արցախի հյուսիսային մասում՝ արևմուտքից – արևելք, ձգվում է Մռավի լեռնաշղթան (Տե՛ս նկ. 1), որը Ղարաբաղի լեռնաշղթայից բաժանված է Թարթառ գետի հովտով: Այս լեռնաշղթայի վրա են Արցախի ամենաբարձր լեռնագագաթները՝ Գյամիշը և Մռավը: Սրա ճյուղավորությունն է կազմում դեպի հյուսիս – արևելք ձգվող Եզնասար լեռնապարը: Ասես մարդկային ցեղի ծնունդով, ամենազոր արարչի կամոք Մեծ Հայքին, մասնավորապես Արցախ աշխարհին, բաժին է հասել աշխարհագրական դրախտային մի միջավայր, ուր գոյություն ունեն բոլոր պայմանները բարեկեցիկ ու հարուստ կյանքի համար՝ նախապես իմանալով, որ ճակատագիրը հային ավանդել է ողբերգական ու դրամատիկ դրվագներով հարուստ պատմություն: Այսպիսով, Արցախ աշխարհը Հայկական լեռնաշխարհի անբաժանելի մասն է կազմում:

Հարկ է նշել, որ Արտաշեսյանների և Արշակունիների թագավորության շրջանում Արցախը մտնում էր Հայկական պետության մեջ, իսկ հետագայում Սասանյաններն այն ժամանակավորապես միացրեցին Աղվանքի մարզպանությանը:

Բագրատունյաց թագավորության կազմավորումից քիչ անց ասպարեզ են գալիս գավառային մի շարք թագավորություններ:

Անցնելով պետության գլուխ, նրանք այս անգամ փորձեցին շահել հայ նախարարական տների համակրանքն ու ամրապնդել գավառային իշխանությունները: Հատկապես ուշադրության կենտրոնում պահելով սահմանամերձ թագավորությունների հզորացման գործընթացը: Դրանով հանդերձ Բագրատունիները չէին մոռանում կենտրոնաձիգ իշխանության պահպանման անհրաժեշտությունը, որի առհավտչյան է հանդիսանում գավառային թագավորությունների կողմից Բագրատունիների գերագահության ընդունման փաստը:

Բագրատունյաց թագավորության շրջանում Արցախի իշխանական տան ճյուղերը վերստին հզորացան և վերոհիշյալ թագավորությանը ենթակա լինելով

ստեղծեցին Խաչենի, Փառիսոսի և Դիզակի իշխանությունները:

IX դարի առաջին կեսերին Արցախի արևմտյան և հյուսիսային կողմերում ստեղծվում է Խաչենի իշխանությունը, կենտրոն ունենալով համանուն բերդը: Վերոնշյալ ժամանակահատվածում Խաչենի իշխան Սահլ Սմբատյանը մի շարք հաղթանակներ տանելով արաբների նկատմամբ, ամրապնդեց իշխանության իր դիրքերը՝ նոր հողերի տիրելով Սևանա լճի ավազանում:

Փաստորեն, Խաչենի իշխանությունն իր մեջ ներառելով Արցախի տարածքի գերակշիռ մասը, միջնադարում երբեմն իր անունը տարածում էր ողջ նահանգի վրա:

Սահլ Սմբատյանի կյանքի վերջին տարիներին երկիրը կառավարում էին նրա երկու որդիները՝ Հովհաննեսը և Ատրներսեհը:

Արաբական տիրապետության դեմ կազմակերպած ապստամբության պատճառով հայ մի շարք իշխանների, այդ թվում Սահլ Սմբատյանի և իր երկու որդիներին, 855 թվականին Բուղան աքսորել է Արաբիա: Աքսորից տուն վերադարձավ միայն Ատրներսեհը և շարունակեց իշխել ինչպես Վերին, այնպես էլ Ներքին Խաչենում:

Հարկ է նշել, որ Առանշանիկների և Միհրանյանների մրցակցության պատճառով գրեթե սպառված Միհրական տոհմի վերջին ներկայացուցչուհի օրիորդ Սպրամն ամուսնանում է Ատրներսեհի հետ իր տոհմական արյան հոլովույթը գոնե այս կերպ շարունակելու համար: Մովսես Կաղանկատվացին հայտնում է, որ «Խորաձորում… Դաղոյի վանքի» մոտ (IX դ.) ամուսնուն կորցրած Ապրսամիկը «զինվում է այրական քաջությամբ, վերցնում է իր ողջ մնացած դուստր Սպրամին, գիշերային տաժանելի ճամփորդությամբ գնում է Խաչենի բերդը: Իր տան մասին բարիք մտածելով Սպրամին ամուսնացնում է Սահլի որդի Ատրներսեհի հետ»[1]: Պատահական չէ, որ հնագույն աղբյուրներում հիշատակվող Խաչենի բերդ – ամրոցը ժողովուրդը կոչել է Կաչաղակաբերդ, որովհետև կաչաղակները միայն կարող են բարձրանալ նրա սրածայր գագաթը:

Կաչաղակաբերդն Արցախի հրաշալիքներից մեկն է, որը մեծ դեր է խաղացել Խաչենի պատմության մեջ : Մարդու երևակայությունն ավելի բանաստեղծական է դառնում, երբ նայում է համատարած կանաչի միջից բարձրացող և երկնքի կապույտի մեջ ճերմակին տվող անձեռակերտ բերդին (Տե՛ս նկ. 3):

[1] Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 266:

Իր կյանքի վերջին տարիներին Ատրներսեհը զբաղվել է խաղաղ շինարարությամբ: Ժամանակագրի վկայությամբ «Ատրներսեհը շինում է Հանդի բերդը և ապարանք է կառուցում Վայկունիք գյուղում, որտեղ կա արքունական բաղանիք»[1]: Հանդաբերդը գտնվում է Արցախի Վերին Խաչեն գավառում: Այն կանգնած է սեպաձև ժայռի վրա՝ ունենալով միայն մի նեղ և դժվար անցանելի մուտք: Եղել է Արցախի ամուր բերդերից: Մինչ օրս կանգուն են Հանդաբերդի անմատչելի պարիսպներն ու աշտարակները (Տե՛ս նկ. 2):

Խաչենի իշխանությունն առավել հզորացավ IX դարի վերջերին Ատրներսեհի որդի Գրիգոր Առանշանիկի իշխանության տարիներին, որը մեծ դեր կատարեց Արևելից կողմանց պատմության մեջ:

Առանշահիկների իշխանական տունը շարունակում էր գլխավորել Խաչենի քաղաքական, տնտեսական ու մշակութային առաջընթացը: Գրիգորը Թարթառի աջ ափին կառուցեց Հավքախաղաց բերդը, որը դարձավ աթոռանիստ կենտրոն: Առանշահիկների հովանավորությամբ Խաչենի տարբեր գավառներում կառուցվեցին ոչ միայն անառիկ ամրոցներ՝ Ջրաբերդը (Տե՛ս նկ. 4), Խոխանաբերդը, վերոհիշյալ Կաչաղակաբերդը, Հանդաբերդը, այլ նաև հրաշագեղ խաչքարեր ու վանական համալիրներ (Տե՛ս նկ. 5, 6):

Հարկ ենք համարում նշել, որ Ջրաբերդից ավելի անմատչելի ամրություն բնությունը շատ քիչ է ստեղծել Արցախ աշխարհում: Մի կտոր հարթություն, թեկուզ կալաչափ մեծությամբ, դժվար է գտնել Ջրաբերդի մոտերքում: Մի ամբողջ լեռնապար, որը խորացել և մասնատել է Թարթառը: Միայն ժայռերն ու մարդաշեն պարիսպները չեն ամրացնում այս բերդը, միայն խոր խրամատների պես ձորերը չեն, որ փակում են նրա չորս կողմը: Երեք կողմից նրան շրջապատել են անհանգիստ ջրերը, մի կողմից Թրղին, երկու կողմից Թարթառը: Այս ջրերից է առաջացել բերդի «Ջրաբերդ» անունը[2] :

IX դարի վերջերին Համամ – Գրիգորի մահվանից հետո Խաչենի իշխանությունը տրոհվում է նրա որդիների միջև: Գրիգոր - Համամն ունեցել է հինգ արու զավակներ՝ Ապուլին, Ատրներսեհը, Սահակ Սևադան, Սմբատը և Վասակը: Ավագ որդին՝ Ապուլին սպանվել է եղբոր՝ Սմբատի կողմից:

---

[1] Մովսես Կաղանկատվացի, էջ 266:
[2] Մկրտչյան Շ., նշվ. աշխ., էջ 63-64:

Այսպիսով, Արցախի արևմտյան և հյուսիսային կողմերում ստեղծված Խաչենի իշխանությունն իր մեջ ներառելով Արցախի տարածքի գերակշիռ մասը, միջնադարում երբեմն իր անունը տարածում էր ողջ նահանգի վրա: Ուստի Գրիգորից սերված ճյուղերը հետագայում տվել են նոր ոստեր, որոնք լուսավոր հետք թողեցին հայոց պատմության միջնադարյան ժամանակահատվածում:

Բագրատունյաց թագավորության շրջանում Արցախում գործող պետական միավորումներից իր նշանակությամբ և հզորությամբ հաջորդը կարելի է համարել Փառիսոսի թագավորությունը: Այն ստեղծվում է Սահակ Սևադայի հիմնած իշխանության հիմքերի վրա X դարի կեսերին նրա թոռան՝ Հովհաննես – Սենիքերիմի ջանքերով:

Պետք է նշել, որ Փառիսոսը ժամանակի նշանավոր բնակավայրերից մեկն էր, որը հանդիսացել է նաև հոգևոր թեմի առաջնորդի նստավայրը: Հզորացող Փառիսոսի թագավորությունն անհանգստություն է առաջացնում հարևանների շրջանում՝ մանավանդ վրաց թագավորությանը, Անիի Բագրատունիներին և Գանձակի մահմեդական ամիրայությանը: Թեև Հովհաննես-Սենիքերիմի մահից հետո թագավորությունը շարունակում էր ապրել, բայց նրա դիրքերը երերուն էին:

Խաչենի իշխանության և Փառիսոսի թագավորության կողքին իր ուրույն տեղն ուներ նաև Դիզակի իշխանությունը: VIII դարի վերջին Առանշահիկների այդ ճյուղն իշխում էր Արցախի հարավային գավառներում:

Հարկ է նշել, որ Դիզակի իշխանությունը վերընթացի ուղղին բռնեց Եսայի Աբու Մուսեի կառավարման շրջանում (IX դարի առաջին կեսին): Վերջինիս հաջողվեց պայքարել ու դիմակայել արաբներին և դրսեկ մյուս թշնամիներին: Եսայի Աբու Մուսեի գործը շարունակեց որդին՝ Մովսես իշխանը: Իսկ վերոհիշյալ տեղեկությունների համաձայն, Մովսես իշխանին մեկը մյուսի ետևից հաջորդեցին որդիները՝ Գագիկն ու Վաչագանը: Հարկ է նշել, որ Խաչենի, Փառիսոսի և Դիզակի իշխանություններն իրար հետ սերտ հարաբերություններ ունեին և համաարցախյան հարցերը լուծում էին համատեղ ջանքերով:

Բագրատունյաց թագավորության շրջանում ստեղծված Արցախի իշխանություններն աստիճանաբար անկում են ապրում:

Հարկ է նշել, որ Արցախի իշխանություններից առաջինը կործանվել է

Փառիսոսի թագավորությունը, որը գոյատևեց շուրջ մեկ դար (X-XI դդ.): Փառիսոսի

անկմանը զուգահեռ Բագրատունյաց թագավորությունը ճգնաժամ էր ապրում: 1041 թվականին Հովհաննես - Սմբատը վախճանվեց առանց ժառանգ թողնելու: Դա պատճառ դարձավ գահակալական սուր պայքարի:Ուստի՝ 1045 թվականին վերջ է դրվում Բագրատունիների կենտրոնական թագավորությանը, երկիրը դառնում է բյուզանդական սովորական մի նահանգ:

Թեև Բագրատունյաց թագավորությունն անկում ապրեց, սակայն Խաչենի և Դիզակի իշխանություններին հաջողվեց հարատևել մինչև XVI դարը:

Այսպիսով, հայկական պետականության վերականգնման համար IX դարի երկրորդ կեսին ստեղծվել էին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական նպաստավոր պայմաններ: Վերոնշյալ նախադրյալների արդյունքում 885 թվականին ստեղծվեց Բագրատունյաց թագավորությունը: Բագրատունիներին հաջողվեց ստեղծել կոնֆեդերատիվ բնույթի մի պետություն, որը տերերին հնարավորություն ընձեռեց ստեղծել քաղաքական ու տնտեսական և մշակութային կյանքը կարգավորող այնպիսի կառույցներ, որոնք պետք է դիմակայեին ապագա արհավիրքներին: Նման կարգավիճակ ունեին նաև Արցախի իշխանությունները: Ուստի՝ Բագրատունյաց թագավորության շրջանում Արցախի իշխանական տան ճյուղերը վերստին հզորացան և վերոհիշյալ թագավորությանը ենթակա լինելով ստեղծեցին Խաչենի, Փառիսոսի և Դիզակի իշխանությունները: Այդ իշխանություններից առաջինը կործանվել է Փառիսոսը, որը գոյատևեց շուրջ մեկ հարյուրամյակ՝ X – XI դարերում: Փառիսոսի անկումից հետո Արցախի իշխանության գավառային մյուս թագավորությունները՝ Խաչենը և Դիզակը դիմակայելով օտար բռնավորների դժնդակ տիրապետության մղձավանջները, ավելի մանրացած, կառչեցին լեռնաստանի անմատչելի գավառներին, լիահույս սպասելով նոր բարենպաստ օրերի գալստյանը: Ուստի Արցախի իշխանությունը, մասնավորապես Խաչենի և Դիզակի գավառային թագավորություններն անկում ապրեցին XVII դարի սկզբին, վերածվելով մելիքությունների:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ «ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Նախ նշենք, որ ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: Այն դասի նպատակին հասնելու միջոց է, եղանակ: Ուստի՝ թե՛ Հայոց պատմության և թե՛ Համաշխարհային պատմության դասաժամերի ընթացքում կիրառում ենք ուսուցման տարբեր մեթոդներ:

Պետք է նշել, որ ուսուցման պրոցեսում տարբերվում են ***պասիվ*** (Տե՛ս սխեմա 1),

Սխեմա 1, Պասսիվ մեթոդ

ակտիվ (Տե՛ս սխեմա 2) և ***ինտերակտիվ (փոխներգործուն)*** մեթոդներ:

Սխեմա 2, Ակտիվ մեթոդ

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interakt», «inter-փոխադարձ», «akt-գործել» բառերից[1]: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, դասավանդողի, այլև՝ միմյանց հետ (Տե՛ս սխեմա 3):

Սխեմա 3, Ինտերակտիվ մեթոդ

Ուստի՝ հետազոտական աշխատանքում կփորձենք ներկայացնել թե ինչպես կարելի է 10-րդ դասարանում Հայոց պատմության դասաժամի ընթացքում դասավանդել «Արցախի իշխանությունը Բագրատունյաց թագավորության շրջանում» թեման ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդների կիրառմամբ:

Նախ սովորողներին կներկայացնենք նոր դասի վերոնշյալ թեման: Այնուհետև գրատախտակին կգրենք «Բագրատունյաց թագավորության ստեղծման գործընթացը» ենթակետը: Ապա դասարանի սովորողներին կբաժանենք երկու խմբի և

[1] http://armedin.am/wp-content/uploads/2019/09/.pdf

վիճակահանությամբ յուրաքանչյուր իր համար կընտրի անուն: Օրինակ մի խումբը կստանա «Արցախ», իսկ մյուսը՝ «Բագրատունի» անունները: Այս ամենից հետո կհանձնարարենք խմբային աշխատանք: Այսինքն՝ սովորողները կարդալով նոր դասանյութի համապատասխան հատվածը, դուրս կբերեն Բագրատունյաց թագավորության հաստատման արտաքին և ներքին նախադրյալները («Արցախ» խումբը կներկայացնի արտաքին նախադրյալները, իսկ «Բագրատունի» խումբը ներքին նախադրյալները): Հանձնարարությունը խմբերը պետք է կատարեն հետևյալ կերպ.

Օրինակ՝

Բագրատունյաց թագավորության հաստատման նախադրյալները

• *Արաբական խալիֆայությունը IX դարում թուլանալը և անկման ուղի բռնելը:* • *Խալիֆայությունից անջատվելու արաբ ամիրաների ձգտումները:* • *Գահակալական կռիվները խալիֆայությունում:* • *Արաբա-բյուզանդական պայքարը:* • *Բյուզանդական կայսրի կողմից Հայաստանի անկախության խրախուսումը:*	• *Հայ իշխանների տիրույթների ընդարձակումը և ռազմականապես զորեղացումը:* • *Հայ ժողովրդի բոլոր խավերի միասնությունը, եկեղեցու դերի բարձրացումը:* • *Հարկերի կրճատումը:* • *Աշոտ Բագրատունու գերիշխանության ճանաչումը Արցախի, Արծրունի, Սյունի, ինչպես նաև Վրաց և Աղվանից իշխանների կողմից:*

Հանձնարարությունը վերջացնելուց հետո խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքը:

Այնուհետև խմբերի ուշադրությունը կուղղենք դասարանում փակցված թեմայի վերաբերյալ քարտեզին: Քարտեզը ներկայացված է ստորև.

Ապա դեպի էլեկտրոնային գրատախտակը և վերջիններս կդիտեն տեսանյութ, որը նվիրված կլինի Բագրատունյաց թագավորությանը և Արցախի իշխանությանն ու գավառային թագավորություններին (Խաչենի, Դիզակի ու Փառիսոսի): Վերոնշյալ տեսանյութը պատմաբան Արտակ Մովսիսյանի «Մեր պատմության դասերը» հեղինակային հաղորդաշարից է: Տեսանյութը դիտելուց հետո մի քանի հարցեր կտանք սովորողներին, որ տեսնենք թե ինչպես ընկալեցին նոր նյութը: Այնուհետև, դասի վերջին՝ ամփոփման և ամրապնդման մասում սովորողների հետ փոխադարձ հարց ու պատասխանի միջոցով կքննարկենք Արցախի բնաշխարհի, մշակութային արժեքների (այդ ընթացքում սովորողներին ցույց տալ Արցախի վերաբերյալ նկարներ, որոնք զետեղված են սույն հետազոտական աշխատանքի հավելված բաժնում) և Արցախյան հիմնախնդրի մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, IX դարի երկրորդ կեսերին հայկական պետականության վերականգնման համար ստեղծվեցին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին նպաստավոր պայմաններ: Վերոնշյալ դարի կեսին հայկական համատարած շարժումներն ու խիզախ ինքնապաշտպանությունը հիմնովին սասանել էին արաբ բռնակալների տիրապետությունը: Այս շրջանում երկրի նախարարական վերնախավի մեջ գերագահություն ստացած Բագրատունյաց տոհմն իր ձեռքը վերցրեց բովանդակ երկրի ղեկը:

Անցնելով պետության գլուխ, Բագրատունիները չմոռանալով կենտրոնաձիգ իշխանության պահպանման անհրաժեշտությունը, փորձեցին շահել հայ նախարարական տների համակրանքն ու ամրապնդել գավառային իշխանությունները, հատկապես ուշադրության կենտրոնում պահելով սահմանամերձ թագավորությունների հզորացման գործընթացը:

Հայաստանի արևելքում գտնվող ինքնամփոփ Արցախ նահանգին հնուց ի վեր տիրում էր Առանշահիկ (Եռանշահիկ) իշխանական տունը, որի ճյուղերը վերստին հզորանալով և Բագրատունյաց թագավորությանն ենթակա լինելով ստեղծեցին փոքրիկ թագավորություններ՝ Խաչենի, Փառիսոսի և Դիզակի:

Թեև Բագրատունյաց թագավորությունը 1045 թվականին անկում ապրեց, սակայն Խաչենի և Դիզակի իշխանություններին հաջողվեց հարատևել, գոյություն ունենալ մի որոշ ժամանակ ևս: Փաստորեն, դարերի ընթացքում երախտապարտ սերունդները փայփայել ու պահպանել են պապերի ամեն մի տքնանք՝ մեր օրերին հասցնելով հայրենի եզերքի հետ կապված հուշն ու պատմությունը:

Հարկ է նշել, որ Խաչենի, Փառիսոսի ու Դիզակի թագավորություններն իրենց լուսավոր հետքն են թողել Արցախական աշխարհի ոչ միայն քաղաքական, այլ նաև մշակութային կյանքի վրա:

Ուստի՝ Բագրատունյաց թագավորության շրջանում (885 – 1045 թթ.) Արցախի իշխանության պատմությունը համարվում է հայ ժողովրդի ամբողջական պատմության կարևորագույն օղակներից մեկը, որն իր նշանակալից դերն է ունեցել

ինչպես հայ ժողովրդի պատմության մեջ, այնպես էլ նրա մշակույթի զարգացման գործում:

Այսպիսով, կարծում ենք, որ ավագ դպրոցի 10-րդ դասարանում Հայոց պատմության դասաժամի ընթացքում անցկացնելով «Արցախի իշխանությունը Բագրատունյաց թագավորության շրջանում» թեման ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդների կիրառմամբ, կարևոր դեր ու նշանակություն կունենա յուրաքանչյուր սովորողի արժեքային համակարգում:

Կարծում ենք նաև, որ մեր հետազոտականաշխատանքն ունի կարևոր նշանակություն կունենա նաև այն առումով, որ ներկայացնելով Բագրատունյաց թագավորության գոյության ընթացքում Արցախի իշխանության պատմությանը վերաբերող պատմական իրողությունները, դրանով իսկ կփորձենք հակահարված տալ թուրք, ադրբեջանցի այն պատմաբաններին, ովքեր խեղաթյուրում են պատմական իրողությունները և իրականացնում նենգափոխումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուր

1. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969:

Ուսումնասիրություններ

1. Բալայան Վ., Արցախի պատմություն (Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը), Երևան, 2002:
2. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարագիտական հուշարձանները, Երևան, 1985:
3. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Երևան ,1994:

Հոդվածներ

1. Բարխուդարյան Ս., Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, «Պատմա - բանասիրական հանդես», 1971, №1:
2. Յուզբաշյան Կ., «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը միջազգային իրավունքի տեսանկյունից, «Պատմա - բանասիրական հանդես», 1975, №1
3. http://armedin.am/wp-content/uploads/2019/09/.pdf

Հայաստան

1. ՄՌԱՎԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ

2. ՀԱՆԴԱԲԵՐԴ

3. ԿԱՉԱՂԱԿԱԲԵՐԴ



4. ՋՐԱԲԵՐԴ

5. ԳՏՉԱՎԱՆՔ

6. ԴԱԴԻ ՎԱՆՔ